№ 156 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13 (25) 1878 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13 (25) № 156

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի չը հոգացիք։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ղարսից։ Նամակ Դիլիջանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հնդկաստան։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ալէքսան խալիֆայի ուսումնարանը։

ԻՆՉԻ ՉԸ ՀՈԳԱՑԻՔ

Ռուս-Թիւրքաց ամբողջ պատերազմի ընթացքում ռուսներից Հայաստանի մէջ գրաւված երկիրներում չը կար ոչ մի հայոց հոգևորական և այդ երկիրների հայոց ժողովուրդը մնացել էր առանց առաջնորդների։

Քանի որ ռուսաց զօրքը գրաւված ունէր Հայաստանի մի մաս, Կ. Պոլսի պատրիարքարանը այդ երկիրները իր իրաւասութենից դուրս համարելով, չէր կարող պահել այնտեղ իր առաջնորդներին, կամ ուղարկել այնտեղ քարոզիչներին։ Բայց Ս. Էջմիածնի վանքը պարտաւոր էր հոգալ այդ մասին։ Հարիւրից աւելի աբեղաներ կան վանքում, որոնք պատերազմի ամբողջ ընթացքի ժամանակ անշարժ նստած էին իրանց խուցերի մէջ։ Ի՞նչէ նրանցից մի քանիսը չուղարկվեցան ռուսներից գրաւված Հայաստանի ժողովուրդը հովվելու համար։ Ս. Էջմիածնի վանքի համար աւելի հեշտ էր այդ անել, քան թէ Կ. Պոլսի պատրիարքարանին. դա մեր վանքի պարտաւորութիւնն էր, բայց նա այդ չարաւ։

Հայ երկրագործ ժողովուրդը, Ալաշկերտի, Բայազէթի և Էրզրումի ժողովուրդը մնալով առանց առաջնորդների, առանց հովիւների, մոլորված էր մնացել։ Զանազան սխալ, անհիմն լուրեր սկսեցին տարածվել ժողովրդի մէջ։ Ոչ մի քահանայ, ոչ մի աբեղայ, ոչ մի քարոզիչ չը կար, որ հանգստացներ ժողովուրդը, բացատրէր նրան իր դրութիւնը, փարատէր երկիւղը և յուսահատութիւնը որ պատել էր հայ գիւղական ազգաբնակութիւնը....

Երկու, երեք օրվայ ճանապարհի հեռաւորութեան վրա գտնվող Ս. Էջմիածնի վանքը չը մտածեց իր բազմաթիւ աբեղաներից, կամ եպիսկոպոսներից մի քանիսներին Հայաստանի կողմը ուղարկելու....

Իսկ եթէ վանքը իր այդ պարտաւորութիւնը կատարէր, ի՞նչքան տանջանքից, յուսահատութենից կազատէր նա հայոց մոլորված, տապնապի մէջ ընկած ժողովրդին.... Ու այդպիսով շատ հեշտ էր Ս. Էջմիածնի վանքին հայ թշուառ ազգաբնակութեան գաղթականութեանը առաջն առնելու։

Երանի իմանայինք՝ ի՞նչով է զբաղված Ս. Էջմիածնի վանքը, երբ ազգի այդ տեսակ ճգնաժամի միջոցում նա իր ամենաստուրը պարտաւորութիւնը չէ կատարում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

5 սեպտեմբերի

Ալաշկերտի սահմանից 60-ից աւելի գերդաստաններ թողած իրանց տուն ու տեղը, արտերը և կալերը, պատրաստած ցորեանները և ամեն ինչ, եկած լցված են Ղարսի գիւղերում և Կաղզմանում, իսկ նրանց պատգամաւորները և նոյնպէս Թիւրքիայի այլ և այլ կողմերի հայ ազգաբնակութեան կողմից պատգամաւորները եկած են Ղարս իրանց զարհուրելի դրութեան մի ճար գտնելու և գաղթելու համար տեղ որոնելու։

Ղարսի առաջնորդ Աղվանեան նրանց ամենքին յորդորելով և յոյսեր տալով ամենայն ջանքով աշխատում է արգելք դնել նրանց գաղթականութեան, թշուառ գաղթականութեան Արժանապատիւ հայրը ամեն կարելի միջոցներ ձեռք է առած և ամեն հարկաւոր տեղերը զբաղված էր, գնալու ժամանակ պատուիրեց ինձ լսել և կատարել վարժապետի բոլոր պահանջները, դասերս լաւ սովորել և աշխատել. աչքերս դեռին ուղղած, ես կարմրեցի, զգալով՝ որ 30-ի չափ աշակերտների ուշադրութիւնը ինձ վրա է դարձած։

Քիչ ժամանակից յետոյ՝ վարժապետը կարդալ տվեց ինձ իմ հնադարեան սաղմոսը, որ ես արդէն անգիր արած՝ կարդում էի ամենայն արագութեամբ, նա շատ տհաճութիւններ ցոյց տալով, գլուխը շարժեց և ապա մեր բարբառով խօսել սկսեց՝ «Աղա մանչ, թուռչու կարաս ունիք»,—հրամանքէս տէր-տէր, եղաւ իմ պատասխանը։ Ես արդէն տէր-տէր բարին լաւ ծանօթ էի և իմ կարծիքով ամեն ուսուցչի հարկաւոր էր տէր-տէր անուն տալ։ «Ես տէր-տէր չեմ, վարժապետ ըսա... տուն եվ օր կերդաս կը, աս գրքերդ թուռչի դնել տուր, ձմեռը պէտք կուգա կը»։ Գլուխ տալով՝ նստեցի տեղս, և ահա այս ժամանակ զանգակի մեղմ ձայնը աւետեց դասամիջոց. այս երևոյթը թէև ինձ ծանօթ էր, բայց այնու ամենայնիւ, օտար խմբի մէջ գտնվելով՝ անշարժ իմ տեղը մնացի։ Իմ հասակակից երեխաները ժամս հաւաքված՝ շրջապատել էին ինձ, մէկը անունս էր հարցնում, միւսը հագուստս զննում, երրորդը ինձ գովում էր կամ քօռ իշան (ծոյլ) տղա անուանում և այլն. կէս ժամից յետոյ երկիրորդ զանգակի ձայնը և լսելի եղան «նէս... նէս» խօսքերը, աշակերտները դուռում դոչումներով լցվեցին դասատուն և կարգով նստարանների վրա շարվիլ սկսեցին։ Ուսուցչի ներս մտնելու պէս աշակերտների խօսակցութեան լեզուի փոխվելը ինձ մտածմունքի ենթարկեց. վասն զի իմ սովորած բոլոր տեղերին դաս էր աւանդում։ Աստուած իմ, այն ինչ հիանալի տեսարան էր, որ բացվեց իմ աչքերի առջև. ուսումնարանի մէջ կարծածիցս աւելի մաքուր էր, նոր օրմերը գեղեցիկ պատկերներով և զանազան քարտէզներով զարդարված էին, ուսուցիչը ինձ այնպէս երևաց որ Տէր Ք....ի *) նման կեղտոտ և արբեցող քահանայ չը պէտք է լինէր։ Նա եւրոպական հագուստի մէջ, ոսկէ շղթայով, փայլուն ժամացոյցով էր, և կարծես մի ուրիշ ձևով ծուռ-մուռ շարժուածք ունէր որ մտքումս ծնվեց, թէ նա անչուշտ մի առանձին էակ պէտք է լինի, որ ժպիտի նշոյլ անգամ ածելած երեսի վրա չէ տեսնվում և սրբերի բարբառով է խօսում։ Նա հէնց առաջին տեսութիւնով երկու փոսերի մէջ պահված մանրիկ աչքերը իմ վրայ դարձրեց և մի սուր հայեացքով ոտից մինչև գլուխ ինձ զննելուց յետոյ՝ տառաջարկեց երրորդ կարգի նստարանի վրայ նստել։ Գլուխ խոնարհեցնելով՝ գրքերս պինդ բռնած, արձանի պէս ցոյց տված տեղը նստեցի։ Առաջին անգամ էր որ այսպիսի հիանալի կերպով զարդարված ուսումնարանում մտայ. ես արդէն ապշած էի, որովհետև այդտեղ ամեն բան ինձ համար օտար էր և նոր։ Գլոբուսը (երկրագունտ) որ ուսուցչի գրասեղանի վրայ դրված էր, իր կլորակ ձևով և մանրիկ խառն ի խուռն խազերով գրաւեց իմ ուշադրութիւնը. երկար մտածեցի, որով հազիւ թէ իմ մէջ կարողացայ ծխախոտի արկղ կամ թանաքաման լինելը հաստատել։

Եղբայրս, որ ուսուցչի հետ խօսելով զրաւում, միշտ միատեսակ առարկայ էին աւանդվում և այն միայն հայ լեզուով։ Ալէքսան խալիֆան մօտենալով ռուս լեզուով մի քանի բան խօսեց ինձ հետ, ես չէի հասկանում և նրա համար քթիս տակից «да, да» էի անում. ամօթիցս կարմրել և քրտնել սկսեցի. ես արդէն յուսահատ դրութեան մէջ էի և դարձեալ տէր Ք...ի մօտ փոխվել էի մտածում։

Հարկից ստիպված, հետևեալ օրը տօն օրվայ զգեստով զուգված, նոր գրքերը թևիս տակ ուսումնարան գնացի, ուր վարժապետս ա, բ, գ-ի, հայ տառերի և «Պարգև մանկանցի» հետ ինձ ծանօթացնել սկսեց։ Թէ որքան հաճելի թվեցաւ ինձ «Պարգև մանկանցի» ընթերցանութիւնը, այդ անկարագրելի է, այնպէս որ դիշերները փոքրիկ շնիկիս հետ գիրքը գրկած՝ ննջում էի և երբեմն կանանց խմբի մէջ կարդում էի այն։ Որքան որ ինձ սիրելի էին այս առարկաները, նոյնքան ատելի էին սրբազան պատմութեան երկար ու բարակ բազմանձաց կենսագրութիւնները անգիր անել, աղօթք սովորելը ամենից անտանելի էր, որովհետև գրաբառ բոլորովին ինձ անծանօթ բառերով էին հիւսված։ Շաբաթ օրերը, որ առհասարակ կրօն էր դաս տրվում, ես զանազան պատճառներ մէջ բերելով՝ չէի գնում ուսումնարան. մի անգամ Ալէքսան խալիֆան որսալով իմ խաբեբայութիւնը, Աստուածածնի պատկերի հանդէպ չոքել հրամայեց այսպիսի թեթև պատիժներ հազարիցս կրած լինելով ինձ զգալի չէր, բայց հօրս յանկարծական ներկայութիւնը լաւու առիթ եղաւ,—«Թողութիւն տուր, վարժապետ, ներիր որդուս յանցանքը» ասաց և ուսուցչիս հրամանով տեղս նստել կարողացայ։

*) Տէր Ք...ի վերաբերմամբ, «Մշակի» 110 համարում «Հին Մանկավարժներ» վերնագրով յօդուածի մէջ ես մանրամասն խօսած եմ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԼԷՔՍԱՆ ԽԱԼԻՖԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

1868 թուի ամառն էր, մի զուարթ առաւօտ երբ արևը նոր էր սկսել իր ճառագայթները սփռել աշխարհիս վրա, եղբայրս ձեռքիցս բռնած ինձ Ալէքսան խալիֆայի ուսումնարանը տարաւ, որ քաղաքիս առաջնակարգ ուսումնարաններից մէկն էր, նոր գիտութիւններով լուսաւորված ուսուցչի իրաւունքների տակ։

Այն սենեակը, որի մէջ մենք մտանք, թէև փոքր, բայց գեղեցիկ պարտէզով շրջապատված էր. այստեղ վարդը նոր էր սկսել իր կարմրագոյն կոկոնները փշալից տերևների միջով ցոյց տալ, բարձր ուռենիներ պատսպարել էին ամբողջ պարտէզը, գոյնզգոյն ծաղիկների և կանաչ ընդեղինների առաւօտվայ ցողը՝ արեգակի հորիզոնից նոր երևեցող ճառագայթներից ցոլում էին կարծես ալմաս կայծեր։ Այդպիսի մի գեղածիծաղ տեսարան գրաւեց իմ մանկական սիրտս, միանգամայն եղբորս որոշումը հաճելի թվեցաւ ինձ՝ «սովորիր այս վարժարանում... տես ինչ գեղեցիկ ծաղիկներ, հոտաւէտ վարդեր են բացվել լաւ դաս սովորող աշակերտներին ընծայելու համար» ասում էր նա, և ուսումնարան մտնելով, անմիջապէս ինձ մի մարդի յանձնեց, որը ընդարձակ դահլիճում շրջելով՝ աշակերտներին դաս էր աւանդում։ Աստուած իմ, այն ինչ հիանալի տեսարան էր, որ բացվեց իմ աչքերի առջև. ուսումնարանի մէջ կարծածիցս աւելի մաքուր էր, նոր օրմերը գեղեցիկ պատկերներով և զանազան քարտէզներով զարդարված էին, ուսուցիչը ինձ այնպէս երևաց որ Տէր Ք....ի *) նման կեղտոտ և արբեցող քահանայ չը պէտք է լինէր։ Նա եւրոպական հագուստի մէջ, ոսկէ շղթայով, փայլուն ժամացոյցով էր, և կարծես մի ուրիշ ձևով ծուռ-մուռ շարժուածք ունէր որ մտքումս ծնվեց, թէ նա անչուշտ մի առանձին էակ պէտք է լինի, որ ժպիտի նշոյլ անգամ ածելած երեսի վրա չէ տեսնվում և սրբերի բարբառով է խօսում։ Նա հէնց առաջին տեսութիւնով երկու փոսերի մէջ պահված մանրիկ աչքերը իմ վրայ դարձրեց և մի սուր հայեացքով ոտից մինչև գլուխ ինձ զննելուց յետոյ՝ տառաջարկեց երրորդ կարգի նստարանի վրայ նստել։ Գլուխ խոնարհեցնելով՝ գրքերս պինդ բռնած, արձանի պէս ցոյց տված տեղը նստեցի։ Առաջին անգամ էր որ այսպիսի հիանալի կերպով զարդարված ուսումնարանում մտայ. ես արդէն ապշած էի, որովհետև այդտեղ ամեն բան ինձ համար օտար էր և նոր։ Գլոբուսը (երկրագունտ) որ ուսուցչի գրասեղանի վրայ դրված էր, իր կլորակ ձևով և մանրիկ խառն ի խուռն խազերով գրաւեց իմ ուշադրութիւնը. երկար մտածեցի, որով հազիւ թէ իմ մէջ կարողացայ ծխախոտի արկղ կամ թանաքաման լինելը հաստատել։

Եղբայրս, որ ուսուցչի հետ խօսելով զրաւում, միշտ միատեսակ առարկայ էին աւանդվում և այն միայն հայ լեզուով։ Ալէքսան խալիֆան մօտենալով ռուս լեզուով մի քանի բան խօսեց ինձ հետ, ես չէի հասկանում և նրա համար քթիս տակից «да, да» էի անում. ամօթիցս կարմրել և քրտնել սկսեցի. ես արդէն յուսահատ դրութեան մէջ էի և դարձեալ տէր Ք...ի մօտ փոխվել էի մտածում։

Հարկից ստիպված, հետևեալ օրը տօն օրվայ զգեստով զուգված, նոր գրքերը թևիս տակ ուսումնարան գնացի, ուր վարժապետս ա, բ, գ-ի, հայ տառերի և «Պարգև մանկանցի» հետ ինձ ծանօթացնել սկսեց։ Թէ որքան հաճելի թվեցաւ ինձ «Պարգև մանկանցի» ընթերցանութիւնը, այդ անկարագրելի է, այնպէս որ դիշերները փոքրիկ շնիկիս հետ գիրքը գրկած՝ ննջում էի և երբեմն կանանց խմբի մէջ կարդում էի այն։ Որքան որ ինձ սիրելի էին այս առարկաները, նոյնքան ատելի էին սրբազան պատմութեան երկար ու բարակ բազմանձաց կենսագրութիւնները անգիր անել, աղօթք սովորելը ամենից անտանելի էր, որովհետև գրաբառ բոլորովին ինձ անծանօթ բառերով էին հիւսված։ Շաբաթ օրերը, որ առհասարակ կրօն էր դաս տրվում, ես զանազան պատճառներ մէջ բերելով՝ չէի գնում ուսումնարան. մի անգամ Ալէքսան խալիֆան որսալով իմ խաբեբայութիւնը, Աստուածածնի պատկերի հանդէպ չոքել հրամայեց այսպիսի թեթև պատիժներ հազարիցս կրած լինելով ինձ զգալի չէր, բայց հօրս յանկարծական ներկայութիւնը լաւու առիթ եղաւ,—«Թողութիւն տուր, վարժապետ, ներիր որդուս յանցանքը» ասաց և ուսուցչիս հրամանով տեղս նստել կարողացայ։

ված վայելում եմ հովասուն օրերի թարմ գեղեցկութիւնը։

Վարդաւառ կիրակին է մի պայծառ առաւօտ։

Գիւղացի ծանօթ ընտանիքներից հրաւիրված ենք գնալ սուրբ Կարապետ անուանեալ ուխտը, թէև մեզ համար պատրաստված էին ձիեր, բայց կանխաւ տեղեկանալով, որ այդ ճանապարհը հազիւ երկու վերստի չափ հեռաւորութիւն ունի Դիլիջանից և պէտք է անցնել ոսկեցողուն հասունացած արտերի և ստուերաւոր անտառի միջով այս պատճառով մենք աւելի լաւ համարեցինք, այդ ճանապարհը գնալ ոտքով, որով աւելի ժամանակ կունենայինք ընութեան զմայլելի տեսարաններով զբաղվել և նրանով բաւական լինելը և ճշմարիտ մենք չը սխալվեցինք։ Առաւօտեան ժամի եօթն էր որ մենք ճանապարհ ընկանք և ահա ճանապարհի ընթացքում ծերունի կանայք, մանր երեխաներ, գեղեցիկ նորահարս-օրիորդներ և չափահաս տանտիկիններ իրանց բարեկազմ զարդարուն պաճուճանքներով թէ խումբ կազմած, թէ սայլերով, թէ ձիերով, և թէ էշերով առաջ էին գնում իրանց հետ տանելով այդ օրվայ զուարագը և ուրախութեան ուտեստի պաշարը և իրաւի գիւղական անպաճոյճ կեանքը գեղեցիկ պատկեր էր ներկայացնում։

Մենք մի ժամից յետոյ հասանք այդ ուխտատեղին, թէև քանի օր առաջ տեղեկացած էինք, որ այդ ուխտատեղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խաչքար, բայց այնու ամենայնիւ մեր աչքերը դարձեալ փնտռում էին տեսնել այստեղ մի հոյակապ եկեղեցի, կամ գէթ փլատակված վանքերի նշխարներ, որոնք այնքան առատ են այս կողմերում, բայց մեր այս ակնկալութիւնը իզուր անցաւ. այդ ուխտը, որը այդ օրը հրաւիրել էր մի քանի գիւղերի ջերմեռանդ ուխտաւորների խումբեր, յիրաւի մի հասարակ խաչքարն էր բաւական գեղեցիկ քանդակագործութեամբ կանգնած կաղամախի ծառի մօտ։

Դեռ քահանան չէր եկած որ ուխտաւորները այդ խաչի շուրջը զարդարել էին ճրագներով. եկաւ քահանան շուրջառ ձգեց և մի գիրք ծածկոց ձգելով խաչքարի մօտ հորիզոնական դիրքով դրված քարի վրա և մի երկու աշտանակ նրա շուրջ, «սկսեց Տէրունական խաչի քո Քրիստոս» և մի քանի աւուր պատշաճի շարականներ և աղօթքներ երգել։ Ուխտաւորները այս ժամուս հաւաքվեցան լսելու ժամերգութիւնը. չը մոռանանք, որ այս հանդիսին ներկայ էր և մի վարդապետ արդար Դաւիթ մականունով, որը ժամերգութենից յետոյ սկսեց մի երկար քարոզ։ Աւելորդ է ասել, որ հայր սուրբի թէ քարոզի բնաբան և թէ նիւթը շատ մաշված և ջրհեղեղան գաղափարների զանգուած էր, որի մասին չարժէ խօսելը. միմիայն մեր ականջին աւելի անհաճոյ էին մանաւանդ վարդապետի ստէպ ստէպ կրկնվող այս օտարոտի բառերը՝

Այստեղի աշակերտները որոնք 30-ի չափ էին, հարկաւոր է խստովանվել, որ չը նայելով թէ նրանք գրեթէ բոլորն էլ պատուաւոր և հարուստ մարդկերանց որդիք էին, բայց այնուամենայնիւ անպատմելի կերպով անառակ կեանք էին վարում՝ գողութիւն, հայհոյանք, կռիւ և հաղար ու մէկ տեսակ անբարոյականութիւններ էին պատահում այստեղ, որոնց մէջ, վստահութեամբ պիտի ասեմ, որ մի քանի խեղճ և խելոք բացառութիւն կազմող մանուկներից մէկը ես էի. մենք մի փոքրիկ խումբ էինք, որ կիրակի օրեր միատեղ ժողոված զբօսնելու էինք գնում։

Ես չեմ զլանում մի քանի խօսքով նկարագրել իմ ուսուցչիս արժանաւորութիւնները. Ալէքսան խալիֆան առողջ գաղափարով, ինքնահաւան և զարմանալի երիտասարդ էր. սա որ իր ուսումը աւարտել էր Հաւիճու ուսումնարանում բաւականի լաւ տիրապետում էր հայ և ռուս լեզուներին, տեղեակ էր ուսուցչական ամեն պարտաւորութիւններին, թէև երբեմն պատահում էր, որ վառարանի մէջ նեղ օրվայ համար պահված ոսոզդով երեխաներին պատժում էր, առանց ճաշի թողնում, անխնայ թաթի հարվածներ էր տալիս և այլն, որ պահանջում է ուսուցչական վեհ պարտքը, բայց «փալախի» և «մկի հորի» հետ նա ծանօթ չէր։

Գրեթէ մի ամսաչափ կարդացած էի այդտեղ, երբ վարժապետիս տկարութեան առիթով, պաշտօնը նրա կրտսեր եղբորը յանձնվեց, որ աղօթքի դաս չը գիտենալուս համար երկու աշակերտների հետ առանց խնայողութեան բողոքով պատժելու էր. նրանք հակառակվել սկսեցին. անբարոյական խօսքերով նա մեզ հայհոյում էր, բոզ-չունքի, բալքեայ, զերէ, հալբաթայ խօսքերը և այն անտեղի չեչտերը և ամենայն զօրութեամբ բացականչութիւնները որոնք շատ անհաճոյ տպաւորութիւններ էին գործում մեր լսելեացը։

Այսպիսի քարոզներ, որ յաճախ պատահում է մեզ լսել մեր հոգևոր հայրերի բերանից, մեզ բոլորովին չեն զարմացնում և ստիպում են մտածել. միթէ հայ եկեղեցու պաշտօնեաները չեն ապրում տասն և իններորդ դարու մէջ և միթէ նրանք չեն տեսնում ժողովրդի հաղար ու մի պէտքերը որոնք արժանի են առաւել տեսական և առաւել չոչափելի միջոցներով դեղ ու դարման մատուցանել նրա բարոյական հիւանդութեանը քան թէ վերացական, անհասկանալի բառերով և անկապ վկայութիւններով երբեմն Մովսէսի և երբեմն այս և այն մարգարէի և առաքեալների օձիքից բռնել։

Վերջապէս ժամերգութիւնը և վարդապետի ճանձրալի քարոզը վերջացաւ և բարեպաշտ ուխտաւորներից մօտ 50 բուրլ գանձանակագրամ հաւաքվեցաւ. մեզ ասացին, որ առաջի տարիները այս արդիւնքը տեղական քահանայի գրպանն է մտնելիս եղել.... Բայց վերջապէս Թիֆլիսի կոնսիստորիան ուշադրութիւն է դարձրել և քննութեան ենթարկելով, բացի այսպիսի կողմնակի գումարների կողոպտուից հանել են նրա տանից մի ոսկեթել բանված սաղաւարտ, վակաս և այլ զարդ ու անօթեղէններ և այդ եկեղեցու կողոպտութեան համար կոնսիստորիան հակառակ իր անտարբեր ընթացքի, ատենական վճռով, վերջապէս վճռել է յիշեալ քահանային քահանայագործութենից դադարեցնել. նրա տեղ կարգելով Յովակիմ քահանայ Առաքելեանցին։ Այս քահանայի մասին պատմեցին, որ բաւական անշահասէր անձն է և այդ ապացուցանում է նրա աշխատութիւնը, մինչդեռ իր նախորդը եկեղեցին մենաւաճառութեան տեղի էր շինել, իսկ սա այս և այն անձինքներին դիմելով մօտ երկու հարիւր բուբլ հանգանակելով աշխատում է եկեղեցու յատակը սալայատակել տալ և ինչ ինչ զարդեր դնելով նրան բարեզարդութեան մէջ պահպանել։

Մինչդեռ մենք այս տողերը գրում էինք, լսեցինք, որ նախկին քահանան սինոդական եպիսկոպոսներից մէկի եղբօրը մի քանի օր իր տանը գեղեցիկ կերպով հիւրասիրել է և յորդորելով, խրախուսելով այս յաջող դիպուածից փութացել է Էջմիածին գնալ իր մեղքերը քաւել և կրկին իր տեղ նշանակվել է առանց հարց ու խնդիր անելու վիճակային կոնսիստորիային....

Վարդուհի Սիմէօնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ ստացանք մի քանի նամակներ, որոնցով Կոնդ անուանված քաղաքամասի բնակիչները յայտնում են իրանց բաւականութիւնը և շնորհակալութիւնը Կոնդի օրիորդաց ուսումնարանի վարժուհի օր. Հ. Տէր-Գրիգորեանին։ Նամակների մէջ ասված է, որ օրիորդը կարճ ժամանակամիջոցում մեծ առաջադիմութիւն է ցոյց տուել։ «Օրիորդը այնպէս է գործում ուսումնարանում, գրված է նամակներից մէկի մէջ, որ կրկնապատկում է մեր եռանդը դէպի ուսումնարանը, որի համար պատրաստ ենք ամեն բան զոհելու»։ Այսպիսի համակրութիւն ժողովուրդը չատ քիչերին է ցոյց տուել։ Մենք միշտ հաւատացած ենք եղել, որ օրիորդ Հ. Տէր-Գրիգորեանը գիւտ է Երևանի պէս քաղաքի օրիորդաց ուսումնարանի համար։ Ափսոս որ Գայանեան օրիորդաց ուսումնարանն էլ Կոնդի և միւս ուսումնարանի տեսչութեանը չէ յանձնած, որ օրիորդը կարողանար այդ ուսումնարանում էլ գործել։

—

Մեզ հաղորդում են ԲԱՇ-ՇՈՐԱԳԵԱԼԻՑ, որ այնտեղ իւղի պուդը 20 ր., իսկ պանիրը 8ր. է ծախվում։ Այսպիսի գները դեռ չեն եղել։

—

Մեզ գրում են հետեւեալը. «Պաշարեղէնների գները, մանաւանդ փայտինը ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ օրից օր բարձրանում են։ Փայտի թանգութեան պատճառը մի քանի աղաներ են, որոնք կապալով վերցրել են զօրքի վառելափայտը։ Դռքա կամ իրանց ծառաները կանգնած են փողոցում և իւրաքանչիւր սայլ փայտի գինը աւելացնելով, առնում են հասարակ ժողովրդի ձեռքից։ Մսի ֆունտը ոչխարի և այծի արժէ 7 կ., իսկ տաւարի 9 կ., ալիւրի պուդը 1 ր. 60 կ., դարու պուդը 80 կ.»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այստեղ զօրքերի թիւը աւելանում է, որովհետև նոքա վերադառնում են Թիւրքիայից։ Առևտուրը այժմ լաւ է գնում, բայց վաճառականները չեն բաւականանում, որովհետև անցեալ տարվայ պէս օգուտներ չեն ստանում։ Այստեղի ազգային հոգևոր երկսեռ դպրոցների նորընծայ հոգաբարձուների հաստատութեան կոնդակը ստացել է տեղական հոգևոր կառավարութիւնը, Սպասում են բացակայ հոգաբարձուների վերադարձին, որ բոլոր հաշիւները և գործերը նրանց յանձնվի։»

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող գնդապետ Զաքար Շահազիզեանից ստացանք 10 բուբլ յօգուտ «Արարատեան ընկերութեան։»

—

Երկրորդ ներքին % փոխառութեան տիրաժը որ կատարվեցաւ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ սեպտեմբերի 2-ին։

Տարած գումար 500 ր.

№ սերիի	№ տոմ.	№ սերիի	№ տոմ.	№ սերիի	№ տոմ.
7,169	10	6,036	50	16,582	25
1,954	2	10,279	23	2,368	38
4,998	31	8,341	5	15,243	20
18,779	15	11,745	18	540	34
9,304	14	16,241	50	14,478	13
13,838	21	10,891	33	602	10
1,213	9	15,647	43	5,261	31
12,227	9	4,537	20	11,829	4
10,901	13	14,378	26	9,990	19
7,518	18	210	21	13,167	49
11,825	33	19,835	29	5,984	11
8,859	7	4,364	3	2,883	40
18,691	11	9,906	42	6,391	13
17,996	35	11,396	27	11,718	8
15,271	17	3,227	17	9,122	2
14,305	19	12,189	2	5.271	11
17,047	30	19,699	37	18,970	16
15,147	34	14,[illegible]62	5	13,770	33
13,361	38	8,138	34	6,589	8
15,196	37	10,585	34	7,775	25
7,304	42	11,781	23	1,236	63
15,889	45	12,160	11	140	11
2,253	39	475	39	12,360	31
5,366	9	138	7	6,339	23
10,534	20	9,795	18	12,074	1
16,874	15	10,506	32	3,924	37
10,148	9	11,465	47	2,572	28
11,167	30	1,778	47	12,104	41
5,914	49	14,915	6	4,771	24
6,957	47	15,646	30	6	48
6,417	26	8,852	19	18,499	42
10,712	5	9,478	40	19,596	17
18,438	24	7,459	12	9,225	1
11,972	35	1,932	38	3,252	22
9,945	2	18,530	19	7,689	8
1,397	18	11,089	14	4,373	7
3,273	47	9,040	39	7,553	40
4,155	13	8,871	21	4,792	28
6,937	30	10,598	40	1,423	34
1,142	16	2,894	36	5,678	9
1,159	34	15,867	8	10,868	6
15,660	14	14,771	34	397	38
11,568	50	15,320	38	9,651	11
10,184	31	12,537	1	17,390	47
1,363	27	2,753	12	15,371	10
8,927	29	19,822	44	16,082	14
14,222	11	10,999	3	3,346	3
11,375	35	11,094	25	957	48
10,367	15	4,936	23	8,142	49
19,890	32	1,109	50	28	44
8,334	18	546	36	2,212	11
7,119	47	19,002	32	8,052	24
4,084	42	6,755	2	6,686	4
16,031	1	17,341	39	8,612	30
14,412	7	19,484	2	8,785	40
9,377	17	8,345	1	7,590	44
11,412	8	1,661	37	7,169	6
557	45	6,491	27	19,785	44
3,480	33	6,818	22	8,497	38
11,802	29	7,271	32	9,199	47
9,483	46	5,956	37	11,265	12
16,428	1	9,570	31	15,570	27
17,888	7	19,765	13	14,411	14
4,039	2	1,959	21	2,918	18
18,635	10	1,048	42	15,176	6

գով ծեծելու անկարողութիւն զգալով՝ նա մեզ մուշտիով (բռունցք) սկսեց խփել, ես ահիցս միշտ մի կողմ էի փախչում, ընկերներս նոյնը, թէպէտ փոքրիկ, բայց ուժեղ բազուկներով պաշտպանվում էինք։ Այս տեսակ անցքի հետեւեալ օրը կիրակի լինելով՝ հրաւիրված էին ուսումնարանի հոգաբարձուները. երկնչելով թէ մի գուցէ նրանց հակառակութիւնը հոգաբարձութեան յայտնվի և ես էլ նրանց հետ համահաւասար պատժվեմ, առաւօտ վաղ քեռորդուս և մի ուրիշ աշակերտի հետ մեր ջրաղացը ուղեւորվեցինք, որ Գարեգեռի եզրի, կանաչ հովտի վրա է, բայց ճանապարհը լաւ չիմանալով՝ արդէն 10 վերստաչափ հեռու գտնվող Ղանլիճայ անունով գիւղն էինք հասել, երբ այս կողմերի նշանաւոր աւազակ, Զատիկը հանդիպելով՝ մեզ իր առաջնորդութեամբ տուն վերադարձրեց։

Երկուշաբթի օրը մօրիցս կաշառված վարժատուն մտայ, ով Աստուած, այն ինչ անտանելի տեսարան պատկերացաւ իմ աչքերի առաջ. Ալէքսան խալիֆան կատաղի կերպարանքով, ահագին քանոնը ձեռքում բռնած, ինձ վրա յարձակվեց, ամեն մի բազարի յիշոցներ առատութեամբ բերանից թափվել սկսեցին, գլուխս ծանր հարուածներից ուռչելով, ես ուշաթափվեցի. դեռ սրանով չը բաւականացած՝ ականջներս երկար միջոց քաշքշելուց յետոյ, ձեռքերս կապեցին։ Ինչ և դառն—դժոխային պատիժ էր, որ ես այն օրը կրեցի, այդ անկարագրելի է. աչքերիս արտասուքը իսպառ չորացել էին, ականջներս կարծես թընդանօթի ձայներ էին արձակել, ամեն ինչ աչքիս առաջ սևացել էր, զոյգ ձեռքերս կոտրվածի նման թուլացել, ոտքերս գնալու անկարող դրութեան մէջ էին... Ահա, ազնիւ ընթերցող, այս եղաւ պատճառը որ ուղիղ երեք ամիս լուսամուտները սև վարագոյրով ծածկված մութ սենեակում, երկու մանուկ աչքերս յաւիտենական խաւարի հետ մրցում էին....

Շնորհակալութիւն բաղդին, կուրութենից փրկված, ես ուսումս շարունակել սկսեցի։ Ինչպէս վերևում ասացինք, ինձ գրաւողը միայն ծաղկալից և մրգաւէտ պարտէզն էր, բայց ապաբաղդաբար նա էլ օր ըստ օրէ տգեղանում էր և իր բնական գեղեցկութենից զրկվում։ Արդէն ասուն էր, և ծառերը իրանց դեղնացած տերևներից մերկանալ էին սկսել, վերջանում էր իմ մխիթարութիւնը, օտարանում էր նա երկար ժամանակ։ Ուսուցիչս դարձեալ շարունակում էր իր բարբարոս վարմունքը մանուկների հետ, ամեն մի անգամ նրա կրակոտ աչքերը տեսնելով՝ ես երկիւղից ամբողջ մարմնով դողում էի... նրա ներկայութիւնը տակաւին յիշեցնում է ինձ իմ հին օրերի կրած անտանելի պատիժները։

Ալէքսան խալիֆան իր ընդունած այդ ասիական խիստ միջոցներով, գործաբեկ էր լինում և երեխաներին դէպի ինքն փոխանակ համակրութեան, նա ատելութեան և թշնամութեան էր հրաւիրում. մի անգամ քաղաքի փողոցներում արձակված աշակերտները մունետիկ (թալլալ) էին շրջել տալի, որ կանչում էր «վարժապետ պուլան, իքի քափէք մուժդասի վար» այս բանին ես ականատես եղայ։

Այստեղ ամսական վարձ մի մի բուբլ էինք վճարում և ձմեռվայ համար փայտի փող, բայց թէ ինչ էր մեր ձմեռվայ ցրտից կրած նեղութիւնները, այս անպատմելի է. դասատունները դրսի չափ, գրիչ, գիրք բռնելու անկարելիութեամբ սառն էին։ Վարժապետը և մի քանի երեխայք այստեղ առանձին իրաւունքներով էին օգտվում. առաջինը մեծ գլխարկով, պալտոն հագած, իսկ միւսները միայն պալտոյով բազմում էին նստարանների վրա, բայց մենք այդ անելու անկարող էինք, որի համար և ձմեռ եղանակում աշակերտների բացակայութեան առիթը միշտ տկարութիւնն էր լինում։

Զմեռվայ վերջերումն էր, որ ես Տէր Ք...-ի մօտ էի սովորել ուզում, բայց իմ այս որոշումը ծնողաց կամքին հակառակ լինելով՝ ինձ սանահար կուռօտմամ ուսին դրած, փողոցի միջով վարժատուն ուղարկեցին, իմ խնդրանաց աղաղակները և լացը ոչինչ ազդեցութիւն չունեցան նրա յամառ—քարացած սրտի վրա. «Էլ, ուստայ չեմ երթայ հա...» անդադար աղաղակում էր նա, որով մանր երեխայք ինձ չրջապատած՝ ծոյլ աշակերտ էին անուանում։ Ուսուցիչս ինձ տեսնելով՝ մի քանի անգամ «չան ծնունդ, հարամզատա» և այլն իր պատուական խօսքերով ողջունեց և ապա վեց հարուածով միայն իմ յանցանքը վեհանձնաբար ներել բարեհաճեցաւ։

Ես արդէն յուսահատված էի, որովհետև ամեն մի բոպէ իր տուած ծանր պատիժներով Ալէքսան խալիֆան մոռացրեց տէր Ք...-ին, որին աշակերտները «անաստուած մօլլայ» էին անուանում։ Մի քանի ժամանակից յետոյ, իմ զանազան գանգատներից ստիպված՝ եղբայրս ինձ համար առանձին մի ռուս ուսուցիչ վարձեց որի մօտ ճարահատեալ հայերէնը թողած՝ միայն ռուսերէն սովորել սկսեցի։

Կ. Ցովհ.

15,267	48	17,720	44	5,574	14
1,880	35	6,232	5	108	27
15,565	50	2.940	6	3,772	34
18,930	6	11,418	47	6,119	1
4,159	49	12,420	16	715	1
14,216	14	15,133	38	11,856	15
8.242	15	14,524	34	9,489	48
9,152	44	18,430	50	11,262	42
8,562	22	10,415	47	10,846	28
14,165	41	9,096	13	6,472	33
3,647	33	8,369	31	15,180	16
6,849	26	5,142	23	5,527	8
2,950	39	15,897	39	15,665	49
3,678	33	12,401	6	5,367	47
13,279	37	17,305	10	12,264	30
5,462	24	8,721	24	19,853	1
6,560	40	15,261	37	10,472	6
7,495	35	6,205	39	5,497	1
19.332	39	12,624	38	3,570	36
8,784	39	7,506	7	17,699	3
13,958	27	11,588	22	10 900	30
9,700	45	11,065	10	19,751	49

19,807	14,695	8,312	14,262
15,513	425	12,296	6.426
1,887	11,260	674	18,842
11,721	590	2,294	14,981
16,987	7,621	14,285	17,925
338	8,701	9,336	192
19,717	9,458	9,699	11,593
17,882	16,637	7,727	5,761
16,222	13,604	9,650	14,310
14,145	7,339	1,165	892
9,401	8,551	18,194	19,353
8,558	14,744	597	18,750
4,089	828	17,667	7,772
1,618	5,704	10,263	
12,208	806	13,542	

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

—

Ռուսաց մամենալը Հնդկաստանի առաջվայ նման անհագիստ է անում անգլօ-հնդկական կառավարութեանը։ «Times» լրագրի մէջ այդ հարցի վերաբերութեամբ տպված է հետևեալ հեռագրական թղթակցութիւնը Կալկուտայից։

«Հնդկաստանի քաղաքականութեան պատմութեան հետ ծանօթ անձինք այն կարծիքի են, որ պէտք է արգելքներ դնել ռուսաց առաջանալուն Աֆգանիստանի ուղղութեամբ։ Վերջին դարի սկզբում ռուսաց և անգլիական առաջաւոր զօրատեղիների գծերի մէջ 2500 մղոն տարածութիւն կար։ Այդ դարի վերջերում երկու գծերը բաժանող տարածութիւնը դարձաւ 2000 մղոն, ներկայ դարի սկզբում փոքրացաւ մինչև 1000 մղոն, իսկ Ղրիմի պատերազմի վերջանալուց յետոյ մինչև 400 մղոն։ Սրանից երևում է, որ վաղ թէ ուշ այդ տարածութիւնը բոլորովին կանհետանայ և երկու պետութիւնները՝ Ռուսաստանը և Անգլիան սահմանակիցներ կը լինեն։ Այսպիսի հաւանական հեռանկար ի նկատի ունենալով, Հնդկաստանի կառավարութիւնը խոհեմութիւն տրած կը լինէր, եթէ այժմէն իսկ որոշէր ապագայ սահմանները։ Այժմեան սահմանագծերը, պատերազմական բազմաթիւ հեղինակութիւնները, պաշտպանութեան համար անյարմար են գտնում։ Ներկայ սահմանը ձգվում է 1000 մղոն տարածութեան վրա և բնակեցրած է մեզ թշնամի ցեղերով, որոնց երկրից հեշտութեամբ կարող են անցնել թշնամու զօրքերը։ Այսպիսի պայմանների մէջ գտնվել և թոյլ տալ Ռուսաստանին հաստատվել Կաբուլի մէջ, ինքնասպան քաղաքականութիւն կը լինէր։ Այդ դէպքում Ռուսաստանը կը տիրապետէ անգլիական երկիրը տանող անցքերին և տեղ կունենայ զօրքեր հաւաքելու համար։ Հնդկաստանը կողոպտելու խոստումը կարող է միացնել Միջին Ասիայի բոլոր վայրենիներին և նոքա Ռուսաստանի դաշնակիցների անունով կը կազմեն մեզ համար երկիւղալի մի բանակ։ Սահմանների վերաբերութեամբ ներկայ ժամանակում Ռուսաստանը աւելի վատ դրութեան մէջ է, քան թէ Անգլիան, այնպէս որ նա քաղաքական և զինուորական մի քանի պատճառներից դրդված ձգտում է մի բնական սահման ունենալ և այդ նպատակով կամենում է գրաւել Աֆգանիստանը։ Հնդկաստանի կառավարութիւնը չէ ցանկանում Ռուսաստանին թշնամի քաղաքականութեան հետևել, բայց հանգամանքների հետևանքները չէ կարելի նախապուշակել։ Ուրեմն մենք պէտք է աշխատենք ձեռք բերել ուժեղ ստրատեգիական պաշտպանողական դիրքեր, որոնք կարող էին պահպանել պատահմունքներից։ Գործին այս տեսակէտից նայելով անհրաժեշտ է, որ մեր ձեռքին լինի այն եռանկիւնին, որ կազմում են Կաբուլ, Գուզնի, Ջելալաբադ և Գունդուկուշի երկիրները։ Այսպիսի դրութիւնը մեզ միջոց կը տայ տիրապետել Հնդկաստանի կենտրոնական ճանապարհների վրա, ծածկել արևելեան և արևմտեան ճանապարհները և հարկաւոր դէպքում սպառնալ Ռուսաստանի սահմաններին։ Մենք կարող ենք տիրապետել յիշեալ եռանկիւնին Աֆգանիստանի օգնութեամբ, եթէ էմիրը մեր կողմն կը լինի։ Այդ նպատակին հասնող միջոցները կամ պէտք է բացարձակ լինեն, այսինքն դիպլոմատիական համաձայնութեամբ Ռուսաստանի հետ, կամ Աֆգանիստանի հետ դաշնակցութիւն կազմելով։ Այժմեան դեսպանութիւնը *) կը լինի բարեկամական և խաղաղացնող։ Նրա նպատակն է ապահովել խաղաղութիւնը թէ Աֆգանիստանի և թէ Ռուսաստանի հետ, բայց անգլիական կառավարութիւնը երբէք չի համբերի իր դէմ ուղղված դաշնակցութիւն Ռուսաստանի և էմիրի մէջ։ Անգլիական կառավարութիւնը ամեն միջոցներ կը գործադնէ, որ պատերազմ չը լինի, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ կօմպրոմիս չի թոյլ տայ։ Պատերազմը աւելի փոքր չարիք կը լինէր, քան թէ ռուսաց ազդեցութիւնը Կաբուլում, որ թշնամական կը լիներ դէպի բրիտանական տիրապետութիւնը Հնդկաստանի մէջ։ Մեր ուղարկված դեսպանութեան գլխաւոր նպատակն է համոզել էմիրին, որ մենք միակ շարժառիթ ունենք՝ պաշտպանել մեզ և ապահովել նրա կատարեալ անկախութիւնը։ Մենք պատրաստ ենք էմիրին օժանդակութիւն և մի և նոյն ժամանակ հողային և ժառանգական ապահովութիւն տալ։ Այս գործը պէտք է առանձնապէս պայմանաւորվի։ Այն կէտերը, որոնց վրա պէտք է ուշադրութիւն դարձնվի, հետևեալներն են. պէտք է թոյլ տալ Անգլիային Բալխայում, Հերատում և միւս սահմանակից քաղաքներում գործակալներ ունենալ։ Պէտք է համաձայնել էմիրի հետ, որ նա իրաւունք չունենայ դիպլոմատիական յարաբերութիւններ հաստատել ոչ մի պետութեան հետ առանց Հնդկաստանի կառավարութեան համաձայնութիւնը ստանալու։ Հարկաւոր դէպքում պէտք է առանց արգելքի ընդունել թիւրքաց դեսպանութիւնը, բոլորովին հեռացնել ռուսաց դեսպանին և ապագայում բոլորովին չընդունել ռուսաց գործակալներին։ Եթէ էմիրը չը համոզվի և թշնամութիւն ցոյց տայ դեսպանութեանը, պէտք է միջոցներ ընդունել այդ թշնամութիւնը անվնաս անելու համար, բայց Հնդկաստանի կառավարութիւնը յոյս ունի, որ եթէ յանձնարարութիւնը լաւ կատարվի, շատ հեշտ է համոզել էմիրին որ նրա ու բրիտանական կառավարութեան շահերը միատեսակ են։ Այս յանձնարարութիւնը կատարելու համար ընտրված է պարոն Նէվիլ Զեմբերլեն, որ շատ լաւ ծանօթ է Աֆգանիստանի հետ։»

ԹԻՒՐՔԻԱ

—

«Մշակի» անցեալ համարի հեռագիրները հաղորդեցին, որ Բ. Դուռը Կաբուլի էմիրի մօտ ուղարկեց մի գործակալ, որին պէտք է հետևէր մի դեսպանութիւն դէպի Աֆգանիստան։ Դեսպանութեան նպատակը կը լինի Միջին Ասիայի և Թիւրքիայի բոլոր մուսուլմանն պետութիւններից մի դաշնակցութիւն կազմել։ Այս գործի մասին լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ մանրամասները։

Բ. Դրան Կաբուլի էմիրի մօտ ուղարկված գործակալը Բիլէջիկի նախկին կայմակամ Սայիդ-Բէշադ էֆէնդին է։ Նա կեղծ անունով է ճանապարհորդում և կասկածներին տեղիք չը տալու համար Պարսկաստանից կանցնի։

Ապագայ դեսպանութեան առաջնորդը կը լինի սուլթանի նախկին ադիւտանտ, իսկ այժմ գեներալ, էջերկէս Մահմէդ-փաշան։ Նա կուղևորվի այն ժամանակ, երբ Բ. Դրան գործակալ Սայիդ-Բէշադ-էֆէնդի իր կողմը կը դարձնէ Կաբուլի էմիրին։ Մահմէդ-փաշա նոյնպէս առաջ կուղևորվի Պարսկաստան, որտեղ կը տեսնվի առաջին գործակալի հետ նրա վերադարձի ժամանակ։ Այդտեղ դեսպանութիւնը պաշտօնական ձև կը ստանայ, եթէ գործակալին աջողված կը լինի կատարել իր յանձնարարութիւնը։ Մահմէդ փաշային կուղեկցեն երկու ուլէմներ, գլխաւոր շտաբի երեք օֆիցէրներ և Բ. Դրան երկու քարտուղարներ։

Այսպիսի փոքր արին և անցեալ տարի, երբ դեռ պատերազմը Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ շարունակվում էր։ Այն ժամանակվայ միջնորդը Շէյխ-Ուլ-Իսլամի բարձր կառավարութեան անդամ Խուլուսի-էֆէնդի ուլէմն էր։ Այն ժամանակն էլ մտադիր էին Միջին Ասիայի մահմեդական պետութիւններից մի դաշնակցութիւն կազմել այդ դաշնակցութեան մասնակից անելով Կաբուլի էմիրին։ Խուլուսի-էֆէնդին այն ժամանակը դեռ մի նախագիծ կազմեց և ներկայացրեց Բ. Դրան։ Այդ նախագծի մէջ առաջարկվում էր ոռքի կանգնեցնել բոլոր մահմեդականներին, նոցա թւում և հնդկաստանցիներին։ Այն ժամանակ խօսում էին, որ դիտաւորութիւն կայ բարձրացնել Մահմեդի դրօշակը և հրաւիրել միլիոնաւոր մահմեդականներին սուլթանին օգնելու համար։ Այդ նախագիծը ինչպէս և այլ դրա նմանները, մնաց առանց հետևանքի, մինչև անգամ չը քննվեցաւ։

Նոր դաշնակցութեան միտքը պատկանում է Թէհրանի նախկին դեսպան, ժողովրդական լուսաւորութեան այժմեան մինիստր Մունիֆ-էֆէնդիին։ Մունիֆ-էֆէնդին արաբական ծագումից է և այդ նախագիծը վաղուց է կազմել։ Ասում են, որ նա բաւական կրթված և հեռատես մարդ է։ Նա շատ լաւ ծանօթ է Արաբիայի պատմութեան հետ որ նրան միտք է տուել վերականգնել մահմեդական մեծ պետութիւնը։ Նա Կաբուլը կենտրոն է ընտրել, որտեղից սուլթանի դեսպանները հեշտութեամբ կարող են յարաբերութիւններ ունենալ Բուխարիայի, Բէլուջիստանի, Խիվայի և մինչև անգամ Հնդկաստանի մահմեդականների հոգևոր և քաղաքական պետերի հետ։ Այս նախագիծը շատ ընդարձակ է և դրա իրագործելու համար հարկաւոր է ունենալ Աղէքսանդր Մակեդոնացու ոգին, իսկ յաղթված և ընկած Թիւրքիայի թագաւորի համար անկարելի է հասնել նախագծի նպատակին։»

Լրագիրները հաղորդեցին, որ Թիւրքիայի հաւատարմատար Մահմէդ-Ալի-փաշային ապատամբները սպանեցին։ Այդ անցքի վերաբերութեամբ Բ. Դուռը ուղարկեց հեռաւոր հեռագիրը իր դեսպաններին։

«Ձեզ յայտնի է, որ Մահմէդ-Ալի-փաշային յանձնված էր ուղևորվել այն երկիրները, որոնք պէտք է միանան Սերբիայի և Չերնոգորիայի հետ, որպէս զի հսնդստացնէր տեղական ազգաբնակութիւնը և հաշտեցնէր այն փոփոխութեան հետ, որով նոքա պէտք է միանային թէ դաւանութեամբ և թէ ծագումով իրանց համար օտար տարրի հետ։ Այդ երկիրներից, որտեղ Մահմէդ-Ալի-փաշան կատարում էր իր յանձնարարութիւնը, մենք իսկոյն ստացանք հետևեալ ցաւալի հեռագիրը.—Նակովի և Իպէկի բնակիչները հաւաքվեցին և յարձակվեցին այն տան վրա, որտեղ բնակվում էր իր շտաբով Մահմէդ-Ալի-փաշան, այնպէս որ գեներալի պահապանների և ապստամբների մէջ արիւնահեղ կռիւ սկսվեց։ Երբ ապստամբները այրեցին տան մի մասը, Մահմէդ-Ալի-փաշա կարողացաւ ծածկվել փոքրիկ ամրոցում։ Ապստամբները մնան այդտեղ, սպանեցին Մահմէդ-Ալի-փաշային և նրա շտաբի մի քանի օֆիցէրներին։»

Մահմէդ-Ալի-փաշայի Բ. Դրանը ուղարկված վերջին հեռագրից երևում է որ տեղական ազգաբնակութիւնը նրա դէմ սաստիկ վրդովված է եղել իմանալով, որ փաշան կամենում է նրանց համոզել, որ նրանք ընդդիմանան իրանց հայրենիքը Սերբիայի և Չերնոգորիայի հետ միացնելուն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի «Corresp. Ottomane» լրագիրը հաղորդում է, որ նախկին մեծ վիզիր Մահմուդ-Նէդիմ-փաշա, որ աքսորված է Զեսմա, դիմեց սուլթանին խնդրելով ներել նրան։ Նա աղաչում է սուլթանին կատարել իր խնդիրքը և ասում է, որ ծերանում է և նրա վերջին ցանկութիւնն է վերադառնալ հայրենիք և իր վերջին օրերը իր ընտանիքի մօտ անցկացնել, որովհետև այլ ևս մտադիր չէ մասնակցել պետական գործերին։ Այդ խնդիրքը յանձնեց սուլթանին նրա ադիւտանտներից մէկը։ Սուլթանը նայեց խնդիրքի վրա և գցելով բացականչեց. «Պէտք է միշտ հեռացնել թոյնաւոր արարածներին։ Մինչև այժմ Մահմուդ-Նէդիմ-փաշա պալատում հզօր կողմնակիցներ ունէր։ Այժմ այդ մարդիկը կորցրել են իրանց ազդեցութիւնը սուլթանի վրա։ Մահմուդ-Նէդիմ-փաշայի բարեկամները յոյս չունեն, որ նրան թոյլ տրվի վերադառնալ։ Կ. Պոլիս, որովհետև սուլթանի ասած խօսքերը մեծ նշանակութիւն ունեն։

—Հռոմից «Բէյտերի ընկերութեանը» հեռագրում են հետևեալը։ «Այստեղի լրագիրները լուր էին տարածել, իբր թէ պապական պատուիրակ Վիէննայում, մօնսինիօր Լակոբինի, հասաւ Հռոմ դիպլոմատիական յանձնարարութեամբ։ Այդ լուրը Վատիկանի լրագիրները պաշտօնապէս հերքում են։ Գերմանիայի և պապի կառավարութիւնների մէջ բանակցութիւնները շարունակվում են մօնսենիօր Մագելայի միջնորդութեամբ։ Պապը կարդինալներից կազմված մի մասնաժողով նշանակեց իշխան Բիսմարկի առաջարկութիւնները քննելու համար։ Այդ մասնաժողովի սուրբ անդամները պմեն օր նիստ են ունենում։ Կարդինալների մէջ տիրապետող կարծիքը այն է, որ չը նայելով բանակցութիւնների սկսվելուն և նրանց շարունակվելուն վերջի վերջոյ Գերմանիայից շատ քիչ բան կարելի է ստանալ։ Այստեղ յոյս չունեն, որ մինչև պապ Լեոն XIII-ի գահակալութեան տարեդարձի օրը նոր կարդինալներ նշանակվեն։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 11/23 սեպտեմբերի։ «Times» լրագրին հեռագրում են Կալկուտայից, որ բրիտանական դեսպանութիւնը վերադարձաւ Հնդկաստանի փոխարքայի հեռագրով ուղարկած հրամանին համեմատ։ Դեսպանութիւնը յետաձգված է։ Աֆգանիստանի զօրքերի հրամանատարը Ալիմսվեդում սպառնում էր ոյժով արգելել անգլիական դեսպանութեանը իր ճանապարհը շարունակելու։ «Times» ասում է, որ էմիրի վարմունքը վերաւորանք է Անգլիայի համար և իր մէջ նշանաւոր հետևանքներ է ծածկում։ Պարզ է, որ Շիր-Ալի ընդունել է Ռուսաստանի դաշնակցութիւնը։

*) «Մշակի» հեռագիրները հաղորդեցին այդ դեսպանութեան մասին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար I մասն. աշխատասիրութիւն Զ. Խաչատուրեան և Պաուլսոնի եղանակով. Բագրատայ Մելիմանեանց:

Ծախվում է Զ. Գրիգորեանցի գրախանութում:

Տէօրիտիկական և փորձնական դասեր հասարակ և կրկնաթիւ գրապահութեան (բանկի, ֆաբրիկի առևտրական, կոմմիսիօնների, երկաթուղու, բաժանորդական և այլն) և առևտրական թուաբանութեան, նմանապէս և Եվերսկու սիստեմով:

Կուրսը չարունակվում է 6 ամիս:

Յ. Խաչատուրեան

Դիմել Լաբօրատորնի փողոց. Պարօվի տանը կամ Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկը: 3—3

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կովկաս. գրավաճ. Զաք. Գրիգորեանցի:»

1. Պոլիմպէրիալ—կատակերգութիւն, երկու արարուածով (մանկական թատրոն. թարգմ. Յ. Նազարեանց. տպագրութիւն Զ. Գրիգորեան.

Գինն է 20 կոպէկ:

2. Նախապաշարմունք—I հատոր. աշխատասիրութիւն Յ. Նազարեանց:

Գինն է 50 կոպէկ:

—

Շուտով դուրս կը գայ մամուլի տակից:

1. Ղուկասեանց—ընթերցարան. երր. տպագ.

Գինն է 40 կոպէկ:

Իգդիրու ուսումնարանին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսերէն լեզուի և թուաբանութեան:—Յանկացողները կարող են շուտով իրանց պայմանները յայտնել ուսումնարանի հոգաբարձուներին հետևեալ հասէով:—Въ Игдыръ попечительству Армянскаго Духовнаго (или Вартановскаго) училища.

3—4

ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Գրավաճառանոցը ստացել է «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՑ» մայիս և յունիս ամիսների առանձին—առանձին համարները, որոնք արդէն ուղարկված են բաժանորդներին. օրերումս կը ստանամ յուլիս ամսուայ №—ը. նոյնպէս նամակաւ հաղորդեցին, որ օգոստոսի №—ն էլ ուղարկելու են շուտով: Հրաւիրում ենք յանկացողներին ուղարկել 8 ռուբլի և ստանալ այդ օգտակար ամսագիրը:

2—5

Այս օրերումս ստացվեց Թիֆլիսում Սիբիրիայի կողմից ԱՄԵՆԸԸՆՏԻՐ ԿՈՎԻ ԻՒՂ որ ծախվում է Գ. Թամամշովի քարավանսարում Թուրքունովի կանտորի առաջ. գինն է բոչկայիով գնողներու համար փութն 14 ռուբլ, իսկ ֆունտով 40 կ. կը գովենք աւելի այս իւղի համն և հոտն:

1—2

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԱՅԱՆԵԱՆ հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը բացվել է օգոստոսի 15-ին և այդ օրից սկսված ընդունվում են նոր աշակերտուհիներ:

Տեսուչ Ա. Յովհաննիսեանց

2—3

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Գուստավ Քալանթարեանցինը, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերենշտամի գրավաճառանոցում, Թիֆլիսում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախսով 80 կոպէկ:

6—6

Продается тарантасъ и мебель въ домѣ Теранова № 24 спросить человѣка Щербакова отъ 10 ч. утра и 5 ч. вечера.

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԱՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Փոխվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԻԿՈՎ:

---

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրութեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր ատացուածներով, առածներով, հանելուկներով և յօդուածներով լրացրած: Գինն է 35 կոպէկ: Դումարով առնողներին զեղջումն կը լինի:

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մանաւոր փոփոխութիւններով լրացրած: Գինն է 40 կոպ.: Դումարով առնողներին զեղջումն կը լինի:

Ծանօթութիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի թեմի պ. թեմ. վերատեսչից իբրև սկզբնական դասագիրք հայոց լեզուի՝ իր ձեռքի տակ եղած բոլոր ուսումնարաններում: Սոքա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրեթէ ամենում, նմանապէս և միւս թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում են բացառապէս Կենտրոնական գրավաճառանոցում: Մայրենի լեզուի դ. և գ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը:

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

1) Նահապետական և հայրենի աշխարհ, երրորդ տարվայ ուսմունք և ընթերցմունք. գինն է 65 կ.:

2) Համառօտ մանկավարժութիւն. գինն է 1 ր. 50 կ.:

2—6

Մի երիտասարդ կամենում է Թիֆլիսում դասեր տալ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՑ, ՀԱՅՈՑ պատմութենից և ուրիշ լեզուներից (ռուսերէն և գերմաներէն) և առարկաներից: Յօժար է բընակվել ընտանեաց մէջ: Պայմանները կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատան և Տէր-Յովհաննիսեանի կանդիտերսկում:

2—3

Մի բարձր դաստան գիմնազիստ որոնում է բեպետիտորի տեղ ընտանիքում: Հասցէն թողել «Մշակի» խմբագրատանը:

1—3

Լոյս տեսաւ

«ՆԱԽՍՊԱՏՀԱՐՄՈՒՆՔ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իր մէջ մի ը կեանքից առնված 600-ից աւելի նախապատշարումներ:—Գինն է 50 կ.:

Կարելի է ստանալ հետևեալ հասցէով.—«Въ Тифлисъ.—Кавказская книжная торговля З. П. Грикурова.»

Ց. Նազարեանց

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Սեպտեմբերի 12-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլիմպերիալը)	8	05
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1250	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	236	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 260—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	65
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	40
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	45
„ միւս տեսակը.	7	35
„ չաքարաւազը .	6	—
„ տրանզիտը. .	5	90
„ մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	20
Միւս տեսակը հին սերմից.	7	20
Բուրդը թուչի . . .	6	50
„ թարաքամի .	3	50
Աւիւր Շորագալու . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	70
Մետաքս Նուխվայ . .	200	—
Կախեթունը. . . .	130	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	48	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկի. . . .	25	—
„ լիվանի . . .	18	—
„ մարտինկոյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մենդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ. Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Անանով.

ԽՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	
	առաւ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր. Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի. Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8 ից մինչև 10 ժամը յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը.

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալևմիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ 10-ից մինչև 11 ժամ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ վենեբական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէտունով աչքի հ.:

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակտ կրծքային և ջղային հ.:

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, կ. Բախուտով կանանց և ջղային հ.:

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան:

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ. Պէտունով աչքի հիւանդութիւններ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԳԱՆՁԱԿ. Ն. Մ. Նամակը թեմական տեսչի գործունէութեան և նոր կարգադրութիւնների մասին կը պահենք: Շարունակեցէք հետևել և գրել:

—ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Լուրեր. Դուք հերքում էք պ. Ա. Ա.-ի գրվածը խմբագրին ուղղած նամակով և միևնոյն ժամանակ կամենում էք կեղծ անուն ստորագրել: Չենք տպի, բայց կը պահենք մինչև ձեզանից իրաւունք ստացանք ազգանունը ստորագրելու: Հակառակ դէպքում նամակը կը գցենք:

—ՇՈՒՇԻ. Ոմն չուշեցի. Հաւատացէք, որ ոչ ոքի համար հետաքրքիր չէ իմանալ ով է ծխում 3-դ տեսակի ծխախոտ և ով առաջին տեսակի: Նամակը անտիպ կը մնայ:

—ԹԻՖԼԻՍ. Զ. Շ. Ստացանք 10 ռուբլ յօգուտ Արարատեան ընկերութեան:

Дозволено Цензурою 12 Сентября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ